# ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔԸ

## *Հեռախոսային հարցում*

«2003թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում կուսակցությունների քարոզարշավի ֆինանսական միջոցների մոնիտորինգ» ծրագրի իրականացմանն զուգահեռ Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի Ինթրնեշնլ հայաստանյան մասնաճյուղը կամավոր հիմունքներով անցկացրել է հեռախոսային հարցում՝ պարզելու ընտրակաշառքի մասին քաղաքացիների ընկալումը, նրանց վերաբերմունքը և կիրառված ընտրակաշառքի տեսակը և չափը վերջին խորհրդարանական ընտրությունների ժամանակ:

Հարցումը անցկացվել է Երևան քաղաքի գրեթե բոլոր համայնքներում: Այն անցկացնելու համար օգտվել ենք Արմենթելի տվյալների բազայից և ընտրել պատահական ընտրանքով, յուրաքանչյուր հաջորդ 10-րդը հեռախոսահամարների ցանկից: Հարցմանը մասնակցել է 650 քաղաքացի:

Հարցվողներին առաջարկվել էր պատասխանել հետևյալ հարցերին՝

- Մասնակցել եք արդյո՞ք խորհրդարանական ընտրություններին:
- Ինչո՞վ եք առաջնորդվել կուսակցությունների միջև ընտրություն կատարելիս:
- Ձեզ կամ ձեր ծանոթներին արդյո՞ք առաջարկվել է ընտրակաշառք:
- Ընտրակաշառք առաջարկվել է կուսակցությու՞ն, թե՞ մեծամասնական թեկնածու ընտրելու համար:

Հարցման վերլուծությունից հետո ստացվել են հետևյալ արդյունքները.

### *Պատկեր 1. Մասնակցել եք արդյո՞ք խորհրդարանական ընտրություններին:*

Հարցման մասնակիցների 58%-ը պատասխանել է, որ մասնակցել է 2003թ.-ի ԱԺ ընտրություններին, իսկ 42% -ը չի մասնակցել ընտրություններին: Հարկ է նշել, որ ընտրություններին մասնակցած 58%-ը ներառում է նաև այն քաղաքացիներին, ովքեր գնացել են ընտրության, բայց քվեարկել բոլորին դեմ:



*Պատկեր 2. Ինչո՞վ եք առաջնորդվել կուսակցությունների միջև ընտրություն կատարելիս:*




Հարցման մասնակիցները ընտրության գնալիս առաջնորդվել էին

1. կուսակցության առաջնորդի անձով -32%
2. կուսակցության ծրագրով-31% (կամ ավելի ճիշտ ծրագրի առանձին դրույթներին)
3. ծանոթների խորհրդով-12%
4. կուսակցության քաղաքական գովազդով-11%

Պատասխանողների 14%-ը նշել էին «այլ» տարբերակը, որը ներառում է նաև այն քաղաքացիներին, ովքեր քվեարկել են բոլորին դեմ կամ դժվարացել են պատասխանել:

*Պատկեր 3. Ձեզ կամ ձեր ծանոթներին արդյո՞ք առաջարկվել է ընտրակաշառք:*

Հարցման մասնակիցների 75%-ը պատասխանել է, որ առաջարկվել է ընտրակաշառք իրենց կամ իրենց հարազատներին ու ծանոթներին, իսկ 25%-ը պատասխանել է, որ նրանք նման դեպքերի մասին չեն լսել կամ հրաժարվեցին պատասխանել:




Հարցման 3-րդ կետին դրական պատասխանելու դեպքում, ըստ ցանկության հարցման մասնակիցները պատասխանում էին նաև առաջարկված ընտրակաշառքի տեսակի և չափերի մասին հարցերին: Պատասխանների վերլուծությունից հետո ստացվում է հետևյալ պատկերը՝

1. դրամային ընտրակաշառք - 52% (գումարային ընտրակաշառքը տատանվում է 600-10,000 դրամի սահմաններում):
2. իրային ընտրակաշառք – 26% (իրային ընտրակաշառքները եղել են տարբեր. 1 տուփ ծխախոտ, ջրաչափեր համակարգիչներ):
3. ծառայություններ-11% (հիմնական մատուցված ծառայություններն էին կոմունալ վարձերի մարումը, բնակարանների մուտքերի վերանորոգումը, կնունքները, ասֆալտապատում, ընդհուպ մինչև տղային բանակից ժամանակավոր արձակուրդ):
4. Հարցվողների 11%-ը հրաժարվել է հստակցել ընտրակաշառքի տեսակը:

***Պատկեր 4. Ընտրակաշառք առաջարկվել է կուսակցությու՞ն, թե՞ մեծամասնական թեկնածու ընտրելու համար:***

Մասնակիցների 59%-ը նշելէ, որ ընտրակաշառքը առաջարկվել է կուսակցություններիկ կողմիցմ իսկ 41%-ը մատնանշել է անհատ թեկնածուներին:




Հարցման որոշ մասնակիցները կամովին նշել են նաև այն կուսակցության անունները, որոնցից ստացել են ընտրակաշառքի առաջարկներ: Դրանցից ամենահաճախ կրկնվող կուսակցություններն են՝ Օրինաց Երկիր, Հայաստանի Հանրապետական կուսակցություն և Միավորված աշխատանքային կուսակցություն:

Հարցվողները հնարավորություն ունեին տալու այլ մեկնաբանություններ, եթե այդպիսիք լինեին: Վերլուծելով մեկնաբանությունների արդյունքները՝ կարելի է գալ այն եզրահանգման, որ ընդհանրապես արդար ընտրական գործընթացների հանդեպ ընկել է մարդկանց հավատը և վստահությունը: Մարդիկ ընտրություններին վերաբերում են թերահավատորեն, հուսահատ և մեծանում է անվստահության անջրպետը ժողովրդի և իշխանությունների միջև: Ընտրակաշառքների մասին մեր անցկացրած փոքրիկ հարցումը ինչ-որ առումով արտահայտում է նաև հասարակության մեջ բարոյական արժեքների կտրուկ անկումը և ցինիկ վերաբերմունքը Հայաստանում ընտրական գործընթացների վերաբերյալ ընդհանրապես:

Ստորև նշված են հարցվողների կողմից նշված մի քանի մեկնաբանություններ՝

1. ամեն անգամ հավատում ենք ու սխալվում
2. նախագահականին մասնակցեցինք ի՞նչ հասկացանք, որ հիմա գնայինք
3. ինչ արել եմ լավ եմ արել, ձեզ ինչու՞ պետք է ասեմ
4. փոշմանեցի, որ գնացի ընտրության, ամեն ինչ սուտ է, ճշմարտությունը մահացել է և երևի չի էլ արթնանա
5. հոգնել ենք ընտրություններից էլ, քեզ նմաններից էլ
6. ծիծաղելի գումար առաջարկեցին, չվերցրեցի